Հավելված N 2
ՀՀ կառավարության 2021 թվականի
փետրվարի 4-ի N 142 - Լ որոշման

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

(Գործողությունների պլանի ավարտման ժամկետը 2021 թվականի հունիսի 30-ն է)

ՀՀ	Ուղղություն/ Միջոցառում	Նկարագրություն	Ակնկալվող վերջնարդյունք	Ֆինանսավորումը և աղբյուրը	Պատասխանատու մարմիններ
1.	Գյուղատնտեսական նոր՝ բարձր ավելացված արժեք ձևավորող ընտրված մշակաբույս(եր)ի աճեցման և վերամշակման համար անհրաժեշտ նախապայմանների ձևավորում	Նախատեսվում է գյուղատնտեսական նոր ընտրված մշակաբույսերի (օր.՝ (Industrial Hemp) աճեցման և հետագայում վերամշակման նպատակով ապահովել գիտահետազոտական նպատակով դրանց փորձնական մշակության գործընթացը մեկնարկելու համար անհրաժեշտ իրավական հիմքերը, անհրաժեշտ հումքը և կարողությունները: Մշակաբույսերի փորձնական մշակության արդյունքների հիման վրա հնարավոր կլինի նախանշել գյուղատնտեսական և արդյունաբերական նպատակներով դրանց աճեցման և վերամշակման հետ կապված հետագա քայլերը և ծրագրերը	Ապրանքային արժեշղթաների զարգացում, երկրում ներդրումային հետաքրքրություն ներկայացնող նոր հնարավորությունների ձևավորում, շրջանառությունից դուրս եկած գյուղատնտեսական հողերի որակի բարելավում, մշակվող հողատարածքների ավելացում	1 մլրդ ՀՀ դրամ ՀՀ պետական բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն Կադաստրի կոմիտե
2.	Երևան քաղաքի 33-րդ թաղամասի (Ֆիրդուսի) կառուցապատման ներդրումային ծրագրի ակտիվացում	Երևան քաղաքի 33-րդ թաղամասի կառուցապատման ծրագրի շրջանակներում իրականացվող բազմաֆունկցիոնալ թաղամասի կառուցմամբ էապես կբարելավվի Երևանի կենտրոնական հատվածի ընդհանուր քաղաքային միջավայրը, ճարտարապետական տեսքը և բնակչության համար լրացուցիչ հանգստի գոտի կձևավորվի	Երևանի քաղաքային միջավայրի բարելավում	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	Փոխվարչապետ Տ. Ավինյանի գրասենյակ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ՀՀ քաղաքաշինության կոմիտե Կադաստրի կոմիտե Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)
3.	Կոնդ թաղամասի զարգացման	Նախատեսվում է ակտիվացնել ջանքերը Երևանի Կոնդ թաղամասի զարգացման ներդրումային ծրագրի իրականացման	Թաղամասի պատմա-քաղաքաշինական միջավայրի պահպանություն	Մոտ 60 մլն ՀՀ դրամ ՀՀ պետական բյուջե	Փոխվարչապետ Տ. Ավինյանի գրասենյակ

ՀՀ	Ուղղություն/ Միջոցառում	Նկարագրություն	Ակնկալվող վերջնարդյունք	Ֆինանսավորումը և աղբյուրը	Պատասխանատու մարմիններ
	ներդրումային ծրագրի ակտիվացում	ուղղությամբ, մասնավորապես՝ Կոնդի թաղամասի զարգացման հայեցակարգի համար միջազգային բաց մրցույթ հայտարարելու գործընթացը և դրա արդյունքների ամփոփումը	և «վերակենդանացում», լոկալ տնտեսության և զբոսաշրջության ակտիվացում, աշխատատեղերի ստեղծում	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ՀՀ քաղաքաշինության կոմիտե Կադաստրի կոմիտե Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)
4.	«Հին Երևան» կառուցապատման ծրագրի իրագործում	Նախատեսվում է ակտիվացնել ջանքերը «Հին Երևան» կառուցապատման ծրագրի իրականացման, մասնավորապես՝ ծրագրի տարածքում գտնվող գույքի իրացման գործընթացի ավարտման ուղղությամբ	«Հին Երևան» ծրագրի արդյունավետ ընթացքի ապահովում	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	Փոխվարչապետ Տ. Ավինյանի գրասենյակ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ՀՀ քաղաքաշինության կոմիտե Կադաստրի կոմիտե Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)
5.	«Մասրիկ -1» ֆոտովոլտային կայանի կառուցման ծրագրի իրականացում	Նախատեսվում է Գեղարքունիքի մարզի Մասրիկ տեղանքում 55 ՄՎտ պիկային հզորությամբ Մասրիկ-1 արդյունաբերական մասշտաբի արևային ֆոտովոլտային կայանի կառուցում տարեկան մինչև 120 մլն կՎտժ էլեկտրաէներգիայի արտադրության հնարավորությամբ	Շինարարական աշխատանքների մեկնարկ	60.0 մլն ԱՄՆ դոլար Մասնավոր ներդրումներ	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ (համաձայնությամբ)
6.	ԱՅԳ-1 ծրագրի իրականացում	Հայաստանում արդյունաբերական մասշտաբի արևային ՖՎ «Այգ-1» կայանի կառուցման նպատակով 200մՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանների նախագծման, ֆինանսավորման, կառուցման, տնօրինման և շահագործման համար ծրագրի իրականացում	Հայաստանի էներգետիկ անկախության մակարդակի բարձրացում, վերականգնվող էներգետիկայի	150 մլն ԱՄՆ դոլար Մասնավոր ներդրում	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Վերականգնվող էներգետիկայի և

ՀՀ	Ուղղություն/ Միջոցառում	Նկարագրություն	Ակնկալվող վերջնարդյունք	Ֆինանսավորումը և աղբյուրը	Պատասխանատու մարմիններ
			բնագավառում ներդրումների ներգրավում		էներգախնայողության հիմնադրամ (համաձայնությամբ) «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ (համաձայնությամբ)
7.	«Մասրիկ-2» արևային ֆոտովոլտային կայանների կառուցման մեկնարկ	Նախատեսվում է Կլիմայի ներդրումների հիմնադրամի (CIF) վերականգնվող էներգիայի ընդլայնման ծրագրի (SREP) շրջանակներում թվով 5 արևային ֆոտովոլտային կայանների կառուցում Արագածոտնի և Թալինի մարզերում և արդյունքում՝ գումարային մոտ 120 ՄՎտ էներգետիկ հզորության ստեղծում	Նախաորակավորման մրցույթի հայտարարում	100 մլն ԱՄՆ դոլար Մասնավոր ներդրում	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ (համաձայնությամբ)
8.	Երևանի Սարյան 22 հասցեում գտնվող 17 հարկանի շենքի ներդրումային ծրագրի մեկնարկ	Նախատեսվում է իրականացնել մրցութային գործընթաց, որի արդյունքում ակնկալվում է գույքի տեղում նոր գույքային համալիրի կառուցում, ինչը կդառնա Երևանի այցեքարտերից մեկը	Գույքը մասնավոր սուբյեկտի տնօրինման արդյունքում ներդրումների ներգրավում և նոր աշխատատեղերի ստեղծում	Լրացուցիչ Ֆինանսավորում չի պահանջվում Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
9.	Պետական ընտրված գույքերի օտարման գործընթացների իրականացում	Նախատեսվում է ապահովել պետական մի շարք գույքերի օտարման /մասնավորեցման/ համար անհրաժեշտ գործընթացները	Պետական գույքը մասնավոր սուբյեկտի տնօրինման արդյունքում ներդրումների ներգրավում, քաղաքային միջավայրի բարելավում և նոր աշխատատեղերի ստեղծում	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
10.	Գործող ընդերքօգ-տագործողների արդյունավետ աշխատանքն ապահովող և	Բարեխիղճ ընդերքօգտագործողների խնդիրների ընթացիկ ուսումնասիրությունը թույլ կտա հընթացս լուծումներ տալ դրանց կամ նախաձեռնել օրենսդրական բարեփոխումներ:	Ընդերքօգտագործողների բարձրաձայնված խնդիրներ քննարկված են և տրված են գործնական լուծումների կամ իրավական	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

ՀՀ	Ուղղություն/ Միջոցառում	Նկարագրություն	Ակնկալվող վերջնարդյունք	Ֆինանսավորումը և աղբյուրը	Պատասխանատու մարմիններ
	խոչընդոտող հանգամանքների ուսումնասիրություն		բարեփոխումների առաջարկութուններ		ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ պետական եկամուտների կոմիտե Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ
11.	Երևանի Նորագյուղ թաղամասի զարգացման հայեցակարգի և բիզնես ծրագրի ձևավորման ուղեցույցի մշակում	Նախատեսվում է մշակել Երևանի կենտրոն վարչական շրջանի Նորագյուղ պատմական թաղամասի զարգացման ներդրումային ծրագրի հայեցակարգը և բիզնես նախագիծը: Թաղամասի զարգացման հայեցակարգի հիմքում դրվելու է վերջինս որպես արդիականացված բնակելի և գործարար կենտրոնի վերածելը և դրա կապակցումը թաղամասի և վարչական շրջանի միջով անցնող ենթակառուցվածքների զարգացման հետ:	Երևանի Նորագյուղ թաղամասի արդիականացման միջոցով քաղաքային միջավայրի բարելավում	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում ԱԶԲ տեխնիկական աջակցություն	Փոխվարչապետ Տ. Ավինյանի գրասենյակ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ՀՀ քաղաքաշինության կոմիտե Կադաստրի կոմիտե Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)
12.	Ընտրված քաղաքներում մշակութային և գիտատեխնոլոգիա-կան համայնքային կենտրոնների	Նախատեսվում է մշակել Հայաստանի խոշոր քաղաքային համայնքներում ինտեգրված գիտատեխնոլոգիական և սոցիալ-մշակութային կենտրոններ հիմնելու հայեցակարգը և բիզնես մոդելը: Կենտրոնները մի կողմից կծառայեն որպես հանրակրթական հաստատությունների	Հայաստանի խոշոր քաղաքային և հարակից համայնքներում առաջադեմ կրթական-փորձարա-րական, սոցիալ-մշակութային ու	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Փոխվարչապետ Տ. Ավինյանի գրասենյակ ՀՀ տարածքային կառավարման և

ՀՀ	Ուղղություն/ Միջոցառում	Նկարագրություն	Ակնկալվող վերջնարդյունք	Ֆինանսավորումը և աղբյուրը	Պատասխանատու մարմիններ
	ստեղծման հայեցակարգի և տեխնիկական առաջադրանքի մշակում	ուսուցման գործընթացի համար անհրաժեշտ գործնական-լաբորատոր և փորձարարական միջավայր՝ STEM և հումանիտար ոլորտներում առաջադեմ լաբորատոր պայմանների և աշխատարանների ստեղծմամբ, այդ կերպ խթանելով նաև միջդպրոցական կոլաբորա-ցիաները և համատեղ ուսումնափորձարարա-կան նախագծերի իրականացումը: Կենտրոնները կներառեն սոցիալ-մշակութային և ժամանցային բնույթի ենթակառուցվածք՝ օժտված ժամանակակից լուծումներով և առաջադեմ տեխնիկական հագեցվածությամբ: Նախնական պլանավորմամբ՝ այն կարող է իրականացվել ՊՄԳ ձևաչափով:	ժամանցային միջավայրի ձևավորման միջոցով քաղաքային միջավայրի վերափոխում և համայնքային կյանքի որակի բարելավում		ենթակառուցվածքների նախարարություն ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

09.02.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ